ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N ՄՂ/465-2021

ք.Արտաշատ

„28„ 12 2021թ.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի «բ» ենթակետով և հիմք ընդունելով Ծովիկ Պողոսյանի 14.12.2021 թվականի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի մարզային ենթակայության <<Մխչյանի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ում ուսումնասիրություններ կատարելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով

Ղեկավար՝

Սասուն Զոհրաբյան - ՀՀ Արարատի մարզպետի օգնական

Անդամներ՝

Հայկ Բադալյան - ՀՀ Արարատի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ

Նաիրա Հայրապետյան – ՀՀ Արարատի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

2. Ուսումնասիրության արդյունքները 10-օրյա ժամկետում ներկայացնել մարզպետին:

ՄԱՐԶՊԵՏ՝

28.12.2021

X

ՌԱԶՄԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ

Подписано: TEVONYAN RAZMIK 2008610616

Ռ. ԹԵՎՈՆՅԱՆ